«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների)հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ Երևանի հ 142-մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Թամարա Պապյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3
2. Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում: Ընդհանուր տեղեկություն ընտանեկան դաստիարակության մասին……5
3. Դաստիարակի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման համատեքստում……7
4. Ծնող-մանկապարտեզ համագործակցությունը……10
5. Ծնողական կրթության կարևորությունը երեխայի դաստիարակության հարցում ……12
6. Եզրակացություն……15
7. Օգտագործված գրականության ցանկ……16

Ներածություն

Ծնող-երեխա-դաստիարակ, այսպես են սկսում փոքրիկ մարդուկները իրենց <<գիտակից>> կյանքը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում, քանզի երեխայի համար տեղեկատվության օբեկտ հանդիսանում են ծնողը և մանկավարժական աշխատողը (այսուհետ դաստիարակը):

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում գտնվող երեխան իր կրթության և զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարն է մանկապարտեզում և ընտանիքում: Համագործակցությունը ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Պետք է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Ինչու որպես հետազոտական աշխատանք ընտրել եմ << Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում>> թեման: Լինելով դաստիարակ և երկար տարիներ աշխատելով նախադպրոցական համակարգում մեծ ուշադրություն եմ դարձրել մանկապարտեզի և ծնողի կանոնավոր և արդյունավետ համագործակցությանը: Հետազոտական աշխատանքը միտված է հիմնավորել ծնող-երեխա-դաստիարակ կապի արդյունավետությունը, առանձնահատկությունները՝ սանի կրթության, դաստիարակության և զարգացման գործում:

Տեղեկատվության և տեխնիկայի այս բարդ դարաշրջանում գլխավոր նպատակ եմ համարում ավելի արդյունավետ դարձնել երեխայի կրթությունն ու զարգացումը՝ նրան ներգրավելով ծնող-երեխա-դաստիարակ օղակի մեջ: Այդ նպատակին հասնելու համար հարկ եմ համարում ստեղծել ընկերական մթնոլորտ, որը կօգնի ծնողների հետ քննարկել երեխային առընչվող սոցյալական, հուզական, կրթական, ճանաչողական, ֆիզիզկական նպատակները: Եվ այսպես, ճանաչելով ծնողներին, ընտանիքների

առանձնահատկությունները կհեշտանա յուրաքանչյուր իրադրությունից հեշտ դուրս գալը:

Մանկությունը մարդկային կյանքի կարևորագույն ժամանակաշրջան է, ոչ թե ապագա կյանքի նախապատրաստություն, այլ իսկական պայծառ, յուրօրինակ անկրկնելի կյանք: Եվ այն բանից, թե ինչպես է անցել այդ մանկությունը ով է նրա ձեռքից բռնած տարել մանկական տարիներին, ինչ է ստացել նրա բանականությունն ու սիրտը շրջապատի աշխարհից, այդ ամենից է որոշակիորեն կախված, թե ինչպիսի մարդ կդառնա այսօրվա մանուկը: Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է զարգացման իր անհատական տեմպով և ժամանակացույցով, սովորելու իր ուրույն ոճով և ընտանեկան մշակույթով: Երեխայի կրթադաստիարակչական գործընթացում առաջնային դեր ունի ծնողը, ում միջոցով երեխան յուրացնում է հիմնական սոցիալական գիտելիքները, ձեռք բերում բարոյական ունակություններ ու հմտություններ, ընկալում հասարակության մեջ ապրելու անհրաժեշտ արժեքները: Ծնողն է ապահովում երեխայի հիմնական ֆիզիոլոգիական կարիքները, անվտանգության պահանջմունքները, սոցիալական և նյութական պաշտպանվածության, սիրո և հարգանքի կարիքները: Սակայն մանկապարտեզ ընդունվելուն պես այդ պատասխանատվությունը հավասարապես կիսում ենք մենք՝ դաստիարակներս: Դրա համար արդիական է դառնում ծնող-դաստիարակ համագործակցությունը, որովհետև այդ կապի արդյունքում ծնված մանկավարժական աշխատանքը հասարակությանը տալիս է առողջ դատողությամբ կրթված և զարգացած երեխա:

Այս նպատակներին հասնելու համար պետք է որոշել մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի, ծնողի և սանի հետ համագործակցության և փոխգործակցության կազմակերպման հիմնական ուղղությունները, բացահայտել և վերլուծել մանկավարժական կոլեկտիվի, սաների և ծնողների համագործակցության աստիճանը՝ դաստիարակչական խնդիրների արդյունավետ լուծման համար: Մշակել և սահմանել այն մեթոդները, որոնք կխթանեն մանկավարժական արդյունավետ աշխատանքին:

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

<<Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում են նրա հետ, կազմում նրա անքակտելի մասը>>. Վ.Հյուգո

Ընդհանուր տեղեկություն ընտանեկան դաստիարակության մասին

Ծնվելու պահից երեխան հայտնվում է իր համար բոլորովին նոր միջվայրում, որտեղ նրա հիմնական և առաջին սյունը ընտանիքն է: Երեխան աչքերը բացելով տեսնում է ծնողներին շփվում նրանց հետ: Ծնողների շփումը երեխայի հետ, նույնիսկ նրա վաղ տարիքում, ազդում է երեխայի հետագա զարգացման վրա: Ընտանիքը ավելի լայն հնարավորություն ունի երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ձևերով քան մանկապարտեզը: Յուրաքանչյուր ընտանիք ունի ճիշտ կամ սխալ, բարու կամ չարի, գթասրտության, կարելիի ու չի կարելիի իր պատկերացումները: Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց երեխան աստիճանաբար յուրացնում է վարվելակերպի փոխհաղորդակցման մշակույթը: Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ լիովին կատարում են իրենց դերը: Պատճառները բազմազան են՝ որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսերը չեն կարողանում, իսկ երրորդները չեն հասկանում դրա կարևորությունը:

Այնուամենայնիվ երեխայի համար ընտանիքը համարվում է բնականաբար դաստիարակող միջավայր: Այն իր հետքն է թողնում երեխայի բնավորության և վարքի ձևավորման վրա: Ընտանիքում է, որ երեխան ծանոթանում է կյանքի տարրական կանոններին և ստանում է աշխարհաճանաչման առաջին դասերը: Որքան աճում և զարգանում է երեխան այնքան բարդանում և ընդարձակվում են նրա ստացած տվյալները: Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները, նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը: Ընտանիքում

են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, պատասխանատվությունը, հոգատարությունը:

Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնտեսվարության և երեխայի արագ աճին: ՈՒստի ծնողներին խորհուրդ կտայի՝

- Ժամանակ հատկացնեն իրենց երեխային իսկապես ուշադիր նայելու համար, նկատեն հիվանդությունները, քաշի ավելացումը կամ կորուստը, խնամքի պակասը:
- Ավելի շատ ժամանակ անցկացնեն լսելով երեխաներին: Հարցնեն ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպես են գործերը մանկապարտեզում:
- Ծիծաղեն միասին: Պիտի թողնել, որ երեխան սովորեցնի ծնողին իր պես երեխա լինել, կատակել, զվարճանալ իր ձևով:
- Աշխատել աշխարհին նայել երեխայի աչքերով: Հիանալ առաջին ձյունով, կամ աշնանային տերևների մեջ թավալ գալով:
- Համբուրել երեխային, գրկել նրան, սեղմել ձեռքը և ասել որ սիրում եք նրան:

Երկար տարիներ աշխատելով նախադպրոցական համակարգում, իմ պրակտիկայի ընթացքում հանդիպել եմ շատ ընտանիքների՝ թե **բարեկեցիկ**, որտեղ ծնողներին հուզում է իրենց երեխաների զարգացման մասին հարցերը, թե **արտաքուստ բարեկեցիկ**, որտեղ բարյացակամ չեն վերաբերվում միմյանց նկատմամբ, կարելի է ասել երեխան ապրում է ընտանիքի <<նեղ աշխարհում>>:

Հանդիպել եմ մայրերի, որոնք երեխայի մեջ տեսնում են իրենց կյանքի նպատակը և ըստ իրենց շատ մեծ եռանդով են զբաղվում նրանով: Լինելով <<սիրող մայր>> և կատարելով երեխայի բոլոր ցանկությունները՝ նրա մեջ առաջացրել են կամակորություն, եսասիրություն երեխայի մոտ պակասեցնելով ինքնուրույնությունը: Մեծ աշխատանք է տարվել նման ծնողի հետ, խոսելով մայրական կույր սիրուց առաջացած վտանգների մասին: Հանդիպել եմ նաև այնպիսի մայրերի, ովքեր չեն զբաղվել երեխայով, դուրս թողնելով նրան հսկողությունից: Աշխատանքը կատարվել է շատ նրբանկատորեն, որպեսզի մոր մոտ չառաջանա տհաճություն երեխայի նկատմամբ և նա դիտվի որպես ավելորդ հոգս:

Դաստիարակի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման համատեքստում

Նախադպրոցական մանկավարժության մեջ շատ են դաստիարակի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները, որոնք ամուր հիմք են դնում ծնող-մանկապարտեզ համագործակցության ձևավորմանը, ինչպես նաև օգնում են կազմակերպելու կրթական աշխատանքները սաների հետ, անգամ լուծելու ընտանեկան դաստիարակության մի շարք հարցեր: Գոյություն ունեն մի շարք ձևեր և տեսակներ կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համար.

Այցելություն երեխայի ընտանիք: Համագործակցության այս ձևը մեծ հնարավորություն է տալիս ուսումնասիրության համար՝ կապ հաստատելով երեխայի, նրա ծնողների հետ: Դաստիարակը պետք է ծնողների հետ նախապես համաձայնեցնի այցելության հարմար ժամը, որոշի նաև այցելության նպատակը: Ոտք դնելով շեմից ներս դաստիարակը ֆիքսում է ընտանիքի մթնոլորտը, նաև այն թե ում է հանդիպում ընտանիքի անդամներից, ինչպես է ընթանում զրույցը, կամ ինչպես են քննարկվում բարձրացված հարցերը:

Բաց դռների օր: Բավականին տարածված ձև է, որը հնարավորություն է տալիս ծնողներին ծանոթանալ նախադպրոցական հաստատությանը, նրա կանոններին, ավանդույթներին, կրթական աշխատանքների անցկացման ձևերին: Շրջայցից և դիտումից հետո դաստիարակը զրուցում է ծնողների հետ, տեղեկանում նրանց տպավորությունների մասին և պատասխանում առաջացած հարցերին:

Հարցազրույցներ: Անցկացվում է անհատական և խմբային: Երկու դեպքերում էլ նպատակը նույնն է՝ ինչ է պետք հստակեցնել և ինչով ենք ուզում օգնել: Զրույցի բովանդակությունը հակիրճ է, բովանդակալից ծնողների համար, և այնպես պետք է ներկայացնել, որ խրախուսի ծնողներին խոսել: Դաստիարակը պետք է կարողանա ոչ միայն խոսել, այլ նաև լսել ծնողներին:

Ծնող-մանկապարտեզ համագործակցությունը

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կապը ծնողի հետ երեխաների արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավման բոլոր միջոցները ամենից առաջ պետք է ուղղվեն նախադպրոցական հաստատության և ընտանիքի համագործակցության ամրապնդմանը՝ երեխաների բազմակողմանի դաստիարակության և զարգացման գործում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետը իրենց երեխայի մասին: Չպետք է մոռանալ, որ ծնողների հետ հաջողված յուրաքանչյուր համագործակցություն մեծ արժեք ունի, որից երեխան միայն կշահի: Կարելի է ծնողներից շատ բան սովորել, քանի որ նրանք ավելի լավ գիտեն իրենց երեխաներին: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում իրենց երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Դրական արդյունքի գրավականը ծնողների և դաստիարակների միջև համատեղ աշխատանքն է: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն է, որ օգնում է ճանաչել և հաշվի առնել երեխայի դաստիարակության իրական պայմանները, որը պետք է նաև արդյունավետ կազմակերպվի: Յուրաքնչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցությունը երեխայի դաստիարակության գործընթացին, հանդես գա դաստիարակի օգնականի և աջակցի դերում՝ հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից: Նախադպրոցական հիմնարկները ծնողների հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են բազմազան անհատական և կոլեկտիվ ձևեր՝

Երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը: Կարելի է այնպես տնօրինել ժամանակը, որ երեխային մանկապարտեզ բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը օգտագործվի ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցություն ապահովելու համար, այլ մտերմիկ, արդյունավետ շփում նրանց հետ:

Հեռախոսային զանգեր: Կարելի է հատուկ նպատակով զանգահարել ամիսը մեկ անգամ յուրաքանչյուր ընտանիքի՝ պարզապես կապը պահելու համար:

Ծնողական ժողովներ: Ժողովները այն պաշտոնական հանդիպումներն են, որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը՝ ծնողներին հնարավորություն տալով կիսելու իրենց գաղափարներն ու մտահոգությունները: Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջական հաղորդակցումը, ապա ծնողի և դաստիարակի միջև կապ հաստատելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր՝

- Բրոշյուրները կարող են օգնել ծնողներին ծանոթանալ կրթական ծրագրին
- Շաբաթական գրությունները ամեն շաբաթ կարելի է ուղարկել ծնողին՝ երեխայի մասին տեղեկություն հաղորդելու համար
- Ոչ պաշտոնական գրությունները ծնողին կարելի է ուղարկել կարճ գրությունների տեսքով, որպեսզի նա տեղեկանա երեխայի ձեռքբերումների մասին, նաև շնորհակալություն հայտնվի նրան ուսումնական հաստատությանը աջակցելու համար: Ծնողն իր հերթին կարող է ուղարկել գրություն, որտեղ կարող է երախտագիտություն հայտնել, կամ որևէ խնդրանք հաղորդել:

Պատի տեղեկատվական թերթեր: Սա կարող է օգտակար լինել ծնողին միշտ թարմ տեղեկություն հաղորդելով նրանց ամենօրյա պարապմունքների բաշխման ցանկի, միջոցառումների, ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

Առաջարկությունների տուփ: Այստեղ ծնողին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկությունները և հարցերը գրավոր ներկայացնեն առաջարկությունների տուփի միջոցով, որը տեղադրվում է միջանցքում:

Ծնողական կրթության կարևորությունը երեխայի դաստիարակության հարցում

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ծնողական կրթության թեմաները եղել են բազմազան և բազմաբնույթ, որոնցից ըստ իս կարևոր են հետևյալները՝

Մանկական ագրեսիա: Երեխայի մեջ ավելորդ ագրեսիվությունից խուսափելու լավագույն միջոցը նրան սեր, ուշադրություն ցույց տալն է: Շատ կարևոր է երեխային հնարավորություն տալ դուրս հանելու իր էներգիան և նրա մեջ կուտակված բոլոր բացասական հույզերը: Խուսափեք բռնության և դաժանության տեսարաններով ֆիլմեր և մուլտֆիլմեր դիտելուց: Օգնեք ձեր երեխային ընկերներ գտնել, սովորեցնել նրան շփվել հասակակիցների հետ. համատեղ գործունեության ընթացքում երեխաները արագ կսովորեն ընդհանուր ընդունված վարքի նորմերը: Ցույց մի տվեք ձեր երեխային բացասական վարքագծի օրինակ: Օրինակ երբ դուք շատ բարկացած եք, երեխայի ներկայությամբ փորձեք չբղավել և վիրավորական բառեր չասել,մի դիմեք ֆիզիկական պատժի, մի զսպեք ձեր երեխայի մեջ զայրույթի զգացումը, ընդունեք նրա հույզերը և սովորեցրեք ձեր երեխային արտահայտել դրանք:

Մանկական խանդ: Յուրաքանչյուր երեխա զգացմունքների և հույզերի մի ամբողջ աշխարհ է, որոնք նրա համար շատ դժվար է արտահայտել կյանքի առաջին տարիներին: Մանկական խանդը նույնպես հույզ է, որը շատ հաճախ առաջանում է երեխաների մոտ, երբ նրանց ընտանիքում հայտնվում է մեկ այլ երեխա: Երբ ընտանիքում հայտնվում է առաջին երեխան, ծնողները իրենց ողջ ժամանակն ու էներգիան նվիրում են նրան: Բայց երբ ընտանիքում հայտնվում է երկրորդ երեխան, ծնողները այլևս չեն կարող մեծ ուշադրություն դարձնել ավագ երեխային, ինչպես նախկինում էր: Իհարկե, մեծ երեխան զգում է, որ այժմ ծնողների ուշադրության մեծ մասն իրեն ուղղված չէ, ուստի նա սկսում է անհանգստանալ, որ կարող է կորցնել մոր և հոր սերը, այս պահին դրսևորվում է երեխաների խանդը փոքրի նկատմամբ: Դուք կարող եք խանդոտ երեխային ներգրավել փոքրի խնամքի, խաղալու և նրա հետ շփվելու մեջ, բայց մի ստիպեք, որ նա անպայման խաղա փոքրիկի հետ, կամ օգնի խնամքի հարցում, երբ զբաղված է իր գործերով:

Ինչպես ճիշտ արձագանքել ձեր երեխայի սխալներին: Նման ազդակների դեպքում շատ հաճախ ծնողները չեն վերահսկում իրենց, և երեխաները իրենց լքված և ամբողջովին չսիրված են զգում: Արդյունքում թերագնահատվում է նրանց ինքնագնահատականը, դառնում են նյարդային ու անվճռական:

Թույլ տվեք երեխային սխալվել: Պետք չէ երեխային անընդհատ հիշեցնել իր կատարած սխալի մասին, այլ փորձեք ցույց տալ նրան իրավիճակից դուրս գալու եղանակները, մասնավորապես, եթե երեխան բավականաչափ մեծ է, փորձեք քննարկել նրա հետ: Եթե երեխային անընդհատ հիշեցնեք իր սխալի մասին, ապա կառաջացնեք մեղքի զգացում: Այստեղ մենք մեղավոր չենք, մենք պետք է սովորենք կառուցողականորեն արձագանքել կատարվածին և օգնենք երեխային պարզել, թե ինչ և որտեղ է սխալ արել:

Ծնողների քայլերը երեխայի մանկապարտեզում ունեցած դժվարությունների ժամանակ: Վատ վարքի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը հոգատարությունն է, սերն ու ջերմությունը: Հիմնական բանը հասկանալն այն է, որ ամենաթողությունը հոգատարության և սիրո դրսևորում չէ, այլ հակառակը: Երեխան, գալով մանկապարտեզից, կարող է բողոքել, որ հասակակիցները կռվում են, անուններ են տալիս, խլում են խաղալիքները, կծում, կսմթում կամ չեն ընդունում իրենց խաղը: Այս մասին, իհարկե, անհրաժեշտ է խոսել դաստիարակի հետ: Բայց ծնողները պետք է իմանան, որ երեխաների միջև կոնֆլիկտներն ուղղակի անխուսափելի են, քանի որ մանկապարտեզը մեծ թվով երեխաների հետ շփվելու նրանց առաջին փորձն է:

Չի կարելիներ, որոնք հաճախ հնչում են ծնողների կողմից: Սրանք բացասաբար են ազդում երեխայի ինքնագնահատականի ձևավորման, միջանձնային հարաբերությունների վրա: Օրինակ. Տղան լաց չի լինում, եթե չուտես կպատժվես, չի կարելի բարձր խոսել և ընդանրապես《 Չի կարելիների》 շարքը անսպառ է, ինչքան շատ են դրանք հնչում, այնքան երեխայի կողմից ավելի շատ է բացասական վերաբերմունք ձևավորվում ծնողի նկատամամբ, ինչի արդյունքում էլ առաջանում է անինքնավստահություն սեփական անձի նկատմամբ:

Մանկական վախեր: Վախերի դեպքում ինչ կարող են անել ծնողները Որոշե՛ք, թե կոնկրետ ինչն է , որ վախ է առաջացնում երեխայի մոտ: Մի թերագնահատեք երեխայի

վախը և մի ծաղրեք այն, հակառակը հնարավորության դեպքում կազմակերպեք , որ ձեր երեխան ուրիշներին կարողանա տեսնի այդ իրավիճակում: Կազմակերպեք, որպեսզի երեխան վերահսկողության պայմաններում կարողանա շփման մեջ մտնի իր վախի աղբյուրի հետ: Կարևոր է երեխային հանգստացնելիս չափը չանցնել, չափազանց մխիթարությունը և ուշադրությունը , գրկախառնությունները կարող են բերել այն համոզմանը, թե վախենալու պատճառ կա: Գովեք և պարգևատրեք ձեր երեխային խիզախություն դրսևորելու և վախը հաղթահարելու դեպքում:

Երեխայի «խնդրանքը» մայրիկին: Մայրիկ, ինձ միշտ ասա, որ ես ամեն հարցով կարող եմ քեզ դիմել, ես երբ մեծանամ կկարողանամ վստահել քեզ: Մի արգելիր ինձ լաց լինել, զայրանալ, տխուր լինել, ուրախանալ, երբ մեծանամ, կհասկանամ իմ զգացմունքները: Մխիթարիր ինձ, երբ ինձ համար դժվար է, երբ ես սխալ եմ, երբ ես ձախողվել եմ, ես կմեծանամ և կկարողանամ աջակցել ինձ և ուրիշներին: Հարցրու ինձ, թե ինչ եմ սիրում, հաշվի առ իմ կարիքներն ու հետաքրքրությունները, ես կմեծանամ և կկարողանամ հոգ տանել իմ և ուրիշների մասին: Թույլ տուր քեզ մերժել, չհամաձայնվել քեզ հետ, կմեծանամ և կկարողանամ «ոչ» ասել: Սիրիր ինձ հենց այնպես, երբ կմեծանամ և ինձ արժեքավոր կզգամ: Մնա կողքիս, քանի դեռ ես երեխա եմ, կմեծանամ ու չեմ տառապի մենակությունից: Ավելի հաճախ գրկիր ինձ, խնդրում եմ:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքը շարադրելուց հետո, թեման ավելի խորը ուսումնասիրելուց հետո եկել եմ հետևյալ եզրակացություններին: Հիմնականում մատաղ սերնդի դաստիարակությունը հավասարապես կիսվում է ծնողների և այդ ժամանակահատվածում նրանց կողմից վստահված անձի՝ այս դեպքում դաստիարակի միջև և երկուսն էլ պատասխանատու են հավասարապես, փոքրիկին տալու իր մեծ կյանքի փոքրիկ բանալին: Քանզի եկենք միասին քայլենք ժամանակին համընթաց, հետևում թողնելով մանկավարժական ու ծնողական հպարտությունները: Այսպիսով.

- Ծնողն ու դաստիարակը երեխայից հարկ եղած դեպքում պետք է ներեղություն խնդրեն, եթե դա պետք լինի
- Նրանք պետք է անպայման շնորհակալություն հայտնեն փոքրիկին յուրաքանչյուր լավ, խելացի արարքի համար
- Հոգնածությունը մի կողմ թողնելով, նրա մտքում ծագած յուրաքանչյուր հարց անպատասխան չթողնեն
- Ծնող-դաստիարակ համատեղ ուժերով այս ամենի հետ երեխայի մեջ սերմանենք նախ և առաջ խիղճ, և հետո անցնենք փոքրիկի արժեհամակարգին՝ տալով սեր, բարություն, համբերություն…
- Այս ամենը կատարենք նույն սիրով, որպեսզի օրինակ ծառայենք նրանց: Ամենակարևոր նախապայմանը մեր չափավոր խստությունն է

Եկեք հիշենք, որ երեխաները անկեղծ, անմշակ էակներ են և ինչ տանք այն կստանանք: Բոլորս տարբեր ենք ինչպես մեր արտաքինով, այնպես էլ ներքինով. նրանք ամենաանմեղն են: Գիտակցելով այս ամենը նրանց տանք ամենասիրունն ու ամենաարժեքավորը, հետագա կյանքը գեղեցիկ և հեշտ ապրելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դալլաքյան Ա., Մարության Ս., <<Նախադպրոցական մանկավարժություն>>:
2. Ղույումչյան Գ., Միտոյան Հ., <<Կրթական համալիր ծրագիր>>:
3. Միտոյան Հ., Սմբատյան Լ., <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>:
4. Մակարենկո Ա., <<Դաստիարակություն ծնողության վերաբերյալ>>:
5. Քոչարյան Ա., <<Անհատական աշխատանք երեխաների հետ>>:
6. Քոչարյան Ա., <<Հոգեբանական խորհրդատվություն ծնողներն>>: